Սահակյան Գոհարիկ
ԵՊՀ

«ԺԱՄԱՆԱԿԻ ԳԵՏԸ » ՎԵՊԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վահագն Գրիգորյանի «Ժամանակի գետը» վեպի կառուցվածքը ներառում է կենսագրական, հուշապատումի, նամակագրական, տարեգրության տարրեր: Սակայն հեղինակի գերխնդիրը չի դառնում Տերգալուստյանների տոհմի ձևավորման, անցած ճանապարհի երկարբարակ պատմությունները շարադրելը: Այն սկսվում է բեկումից, որը պատմության և ժամանակի պարտադրանք է: «Այն առտու, երբ եկավ Մահմուդը»-ը դառնում է հնի բեկում, նորի սկիզբ: Տոհմածին է դառնում որբ, նորահարս Մարիամը: Սակայն այնտեղ, որտեղ պետք է ընդհատվեր Տերգալուստյանների տոհմի կյանքը, զարմանալիորեն ընթանում է բնականոնից լրիվ այլ ընթացքով: Վեպում առկա է տոհմի շարունակության խնդիրը: Տոհմը շարունակող հերոսները կենսագրական տարրերի անմիջական կրողներն են դառնում: Տոհմի գաղափարը կրող հերոսներն են Գլակը, Գնելը, նաև Հովսեփը, որոնք նաև հուշապատումի կրողներն են: Սկսվում է հուշապատումը և մորից որդի ժառանգած պատմությունը դառնում է վեպի սկիզբ: Գլակը իր հարազատ երկրի, բարեկամների և հոր մասին տեղեկանում է միայն Մարիամի հուշերից: «Դուն ըսե, թե ինչպիսին էր ան» հարցում-խնդրանքներով հաճախ էր Գլակը դիմում Մարիամին և Մարիամը.

«Ժպտալով (իր հիշողություններին), պատասխանում էր (տասներորդ և հարյուրերորդ անգամ). «Հասակը՝ բարձր, գեղեցիկ, խելացի, բարի, քիչիկ մըն ալ խենթ...»:[1] Սակայն զսպված բնորոշումների պատճառը Գլակը հետո է հասկանում միայն.

«Անձանց մասին երկու խոսքով սահմանափակվելը գալիս էր ներքին վարքականոնից՝ անակարողությունից.... »: (126)

Վեպում հստակ ընթացող տարեգրություն չկա: Գործողությունները անընդհատ անցում են կատարում դարասկիզբ, 1940-50-ականներ և մեր օրեր: Սա վեպի հյուսվածքը չի խեղաթյուրում, խճճում, այլ դառնում է մի կառույց՝ հստակ անցումներով պայմանավորված, որոնք ամրագրված են պատճառահետևանքային կապով:

1 Վ. Գրիգորյան, Ժամանակի գետը, Երևան, 2008թ., էջ 125 (այս գրքից հաջորդ մեջբերումների էջերը կտրվեն բնագրին կից):

Ժամանակագրության հստակ չլինելը պայմանավորում է վեպում գեղարվեստական ժամանակի եռակողմ դրսևորումը՝ անցյալ, ներկա, ապագա, որի մասին ավելի մանրամասն կխոսենք:

Վիպական այս յուրահատկությունը՝ վեպ վեպի մեջ, արձակում տարածված երևույթ է, երբ վեպում նկարագրված դեպքերը, կերպարները կարող են մեկ այլ վեպի համար նյութ հանդիսանալ:

Վահագն Գրիգորյանի «Ժամանակի գետը» վեպում նկարագրված դեպքերը պատմվում են հեղինակի և հերոսների կողմից: Վեպը, մերթընդմերթ պատմում է հեղինակը, որ մեկն է 5-րդ փողոցի բնակիչներից, կա նաև «մենք»-ը, որ պայմանական ականատեսի, հավաքական դիտողի կերպարն է, որ կարող է պատմել նաև չտեսած վայրերի, անցյալի և ապագայի մասին, Գնել Տեր-Գալուստյանը, ով վեպի գլխավոր հերոսն է, և Տարոնը՝ 5-րդ փողոցի բնակիչը՝ համալսարանի ուսանող: Այսինքն, վեպի հեղինակը մեկն է, սակայն պատմողները որպես համահեղինակ, մի քանիսն են: Ի վերջո, այս պատումները հավաքողն ու գրառողը հեղինակն է՝ Գնել Տեր-Գալուստյան-Վահագն Գրիգորյանը, ում պատումի մեջ ձուլված են նաև եղբոր կնոջ՝ Կարինեի, լիտվուհի տիկին Գրասիլդայի որդի՝ Յուոզասի և այլոց հուշապատումային պատառիկներ: Ուստի պատահական չէ, որ հեղինակն անգամ իր տարակուսանքն է հայտնում վեպի հյուսվածքի առումով. «համա թե երևակայություն ունեն սրա հեղինակ-հեղինակները» (263):

Հայ արձակում այս երևույթի երևումները հիմնականում դրսևորվում են նամակապատումի, օրագրային գրառումների և վերհուշի ձևերով:

Օրինակ, եթե առանձնացնենք Հովսեփ Տերգալուստյանի (Յուսուֆ Աղրըօղլի) կյանքի ոդիսականը գավառում ու Ստամբուլում, այդ պատմությունների հետ առնչվող թուրք (Թայիբ Բայքալ, Սուլեյման, Ֆետհիե հանըմ) և ուրիշներ ու հայ (Հակոբ Քեչյան, Ավետիս Քեչյան, Արամ Արարատ) հերոսների կյանքի պատմությունները, Գնելի պոլսական հանդիպումներն ու քաղաքի նկարագրությունները, թուրքերի կողմից հայերի նկատմամբ հալածանքների նկարագրությունները, կունենանք մի առանձին վեպ վեպի մեջ: Առանձին վեպի նյութ է տոհմածին Մարիամի պատմությունը, որ լի էր զրկանքներով ու վախերով: Առանձին պատմություն է Գլակի ամբողջ կյանքը՝ ծնված օրից մինչև մահ, հետո փորձությունների մի ամբողջ շղթա՝ Դեր-Զոր, Հալեպ, Ադանա, Մարսել, Հայաստան, Սիբիր, Երևան, Ֆրանսիա: Վեպի նյութ է նաև Գլակի կնոջ՝ Քնարի պատմությունը, ում ծնողները՝ Դամասկոսի երկու որբեր՝ հայրենի հողից քշված, հայրենիք են վերադարձել ու Սիբիր աքսորվել և նույն

վագոնում ցրտահար վախճանվել: Մեկ այլ պատմություն է Գնելի և Քնարի համատեղ կյանքի ընթացքը: Ծերության շեմին հասած հերոսներին ճակատագիրը նետում է օտար երկիր, և դատապարտում իրենց շիրիմը այնտեղ գտնելուն:

Սրանք առանձին վեպեր են, որ միահյուսվում են իրար, միանում՝ դառնալով մի մեծ վեպ ու պատկերում Տեր-Գալստյան գերդաստանի պատմությունը, որ սկսվում է Տարոն գավառից և ցրվում աշխարհի տարբեր ծայրերում՝ լի կորուստներով ու նահանջներով, սկիզբ առած 1915 թվականից:

Վիպական այս կառուցվածքի շնորհիվ վեպը ձեռք է բերում գեղարվեստական յուրահատուկ առանձնահատկություն և դիտվում որպես ամբողջական համակարգ՝ ընգրկած վեպերի համադրությամբ: Այս պատմությունները բացվում են մեկը մյուսի մեջ, հետընթաց անդրադարձներով հեղինակը ամբողջացնում է կերպարները, և վեպը դառնում է միաձույլ ու ամբողջական, ընդգրկուն ու խորքային:

«Ժամանակի գետը» վեպի կառուցվածքում կարևոր տեղ են զբաղեցնում շեղագիր, օտար տեքստերը, որոնք ինչպես հեղինակն է նշում՝ «վավերական են»: (6)

Հեղինակի նմանատիպ որոշումը՝ վեպում վավերագրեր մեջբերելը, ինքնանպատակ չէր և պատահական չէր նաև այն, որ վավերագրերի օգտագործումն հօգուտ վեպի ընկալվեց: Նախ, պատճառն այն էր, որ վավերագրերի առկայությամբ վեպը ձեռք էր բերում վիպական հավաստիություն և վեպը կապի մեջ էր մտնում իրականության հետ: Վեպում առկա են հոդվածներ, նամակագրություն, հրապարակային ելույթ, պատմական ուսումնասիրություն, քաղաքական հայտարարություն և այլն, որոնք նպաստում են նրան, որ նյութն ու ասելիքը ավելի պարզ ու ճշմարտացի լինեն:

Վեպում առկա շեղագիր տեքստերը, մի տեսակ, տեղեկատվական պատերազմի խորհուրդն ունեն: Այդ տեքստերից տեղեկանում ենք թուրք բաձրաստիճան քաղաքական այրերի և «վայ-պատմաբանների» հայտարարություններին.

«Անհնարին է, որ մեր պապերը հանցագործ եղած լինեն» (17) կամ «պատմությունը թուրքից ավելի պարզերես ազգ չգիտի» (23):

Այս և նման այլ հատվածներում թուրքական կողմը ավելի շատ ժխտողական դիրք է ընդունում և «համոզելու մարտավարությամբ» փորձում սքողել ամեն ինչ.

«Ի հեճուկս մեր հասցեին ուղղված հերյուրանքների, բոլոր տեղա-

հանված հայերը ողջ-առողջ են» (էջ 118), «Տեղահանության ընթացքում ավազակախմբերի հարձակումների հետևանքով սպանված հայերի թիվը առվելագույնս 8500 է: 37 հազարն էլ մահացել է համաճարակներից» (388):

Պատմության դասագրքերում, գեղարվեստական գրականության մեջ, մամուլում, համացանցում, ինչպես նաև թուրք մշակութային քաղաքականության մեջ (ցուցահանդեսներ, մշակութային միջոցառումներ, գիտաժողովներ), Թուրքիան իր հորինած խոսքն է առաջ մղում և միջազգային հանրության աչքին՝ իրականությանը զուգակշիռ է ստեղծում: Իսկ այս ամենին զուգահեռվում է ականատեսների (ամերիկյան դեսպանների և այլոց) վկայությունները, ովքեր բռնագաղթը որակավորում են «երբևէ, որևէ կառավարության ամենադաժան հղացում » (էջ 42) և պատմում Թուրքիայի կողմից «մեծագույն կարգապահությամբ» իրականացրած բռնագաղթի մասին.

«Հենց գաղթականների մոտով անցնում ես, կանայք մեկնում են իրենց զավակներին, խնդրում վերցնել: Իրոք, թուրքերն արդեն այս տղաներից ու աղջիկներից շատերին ընտրել են, որպեսզի ստրկացնեն կամ շատ ավելի վատ նպատակների ծառայեցնեն» (54):

Հայ իրականության մեջ, սակայն, միայն Վահագն Գրիգորյանը չէր, որ օգտագործեց նմանատիպ շեղագիր տեքստեր՝ վավերագրերի ինտերտեքստային նմանատիպ գործառույթ ունեցող կիրառությունների օրինակներ կան նաև Հրանտ Մաթևոսյանի «Մեծամոր» էսսեում, «Տաշքենդ», «Խումհար» և այլ վիպակներում:

Վեպի կառուցվածքային յուրահատկությունները քննելու տեսակետից ուշադրության է արժանի վեպում փակագծերի խնդիրը: Գուցե ընթերցողին առաջին հայացքից ավելորդություն ու խանգարող թվան հեղինակի կողմից շատ հաճախ կիրառվող փակագծերը, սակայն, իրականում, փակագծերի մեջ թաքնված է որևէ ծածուկ միտք, ասելիք, բացահայտում, ճշգրտում, պարզաբանում: Փակագծերը վեպում սոսկ բացահայտության նշաններ չեն և պակաս գործառույթ ու նշանակություն չունեն: Շատ հաճախ փակագծերի շնորհիվ հեղինակը ավելի մանրամասն նկարագրություններ է տալիս. «Մարիամը ձեռքերը կրծքին խաչած քնում էր, որի գեղեցկությունից գեղեցկանում էին մինչև իսկ ամբոխի թողած սպիները (մեկը այտին, մյուսը ծնոտին)» (131), հաճախ էլ Ճշգրտում և պարզաբանում. «Դրանից այն կողմ (Ծնոդյան տոներից այն կողմ) Մարիամը հրաժարվում էր գնալ » (էջ 129), կամ «երբ անվանակոչությունը չեղյալ հայտարարվեց թաղապետարանը, ասվեց, կարող է առաջարկություն

ներկայացնել, բայց իրավասու չէ ինքնագլուխ փոխել անունները (ահա թե ինչու վարչապետն այս դեպքում ձեռնպահ էր մնացել հռետորական արվեստ ցուցադրելուց)» (284):

Փակագծերում հայտնված պարբերությունները նախընթաց միտքը մեկնելուց, բացահայտելուց զատ, կատարում են նաև այլ գործառույթներ: Գրականագետ Վահրամ Դանիելյանը վեպի քննությանն ուղղված իր հոդվածներից մեկում անդրադարձել է այդ գործառույթներին՝ «ծածուկ խոսքի՝ արտահայտություններ» և «իմիջիայլոց ռեպլիկի միտք»[1], որի նշանակությունը դուրս է խոսքի կոնտեքստից, բայց կանխատեսումի ու կանխազգացումի արժեք ունի. «…որոնցից մեկի պատշգամբում հայտնվել է այդ առավոտ հակառակի պես արթնացած դիցուհիդ (սիրտն ինչ-որ բան է գուշակել)» (184):

«Ժամանակի գետը» վեպն ունի ժամանակային մեծ ընդգրկելիություն՝ ցեղասպանությունից մինչև մեր օրեր: Վիպական ժամանակը հանդես է գալիս երեք դրսևորումով՝ անցյալ, ներկա, ապագա: Պետք է նկատել, որ Վահագն Գրիգորյանի վեպում բուն գեղարվեստական ժամանակը ներկան է, և անցյալի պատումը գրվում է ընթերցողի ընթերցմանը զուգահեռ. «Կեսգիշերին, երբ մատներս վերջապես համակարգչի ստեղնաշարին դիպան, ես նորից ես չէի: Ես հայրս էի, նորածին Գլակը, և ինձ Գլակին, գրկած, տատս՝Մարիամը, քայլում էր չոր, փոշոտ,անջուր, անծայր անապատով՝ Հալեպից դեպի Դեյր-Էլ-Զոր…» (38):

Իսկ պատմողի կերպարի թափառումները ժամանակի ու տարածության տարբեր հատվածներում ու նրա վերամարմավորումները վերապրողների տարբեր սերունդների ներկայացուցիչների մեջ համաժամանակյա պարբերականության բնագիր ստանալուն են միտված:

Վեպը բացվում է ներկայի պատկերներով, 1988 թվականի դեպքերի նկարագրություններով՝ սումգայիթյան արյունահեղություն, ղարաբաղյան հանրահավաքներ. «1988-ի փետրվարն էր, գլուխներս խառն էր ղարաբաղյան հանրահավաքներով ժամանակ չէինք գտնում այցելել վերջին շնչում պառկած մեր հարևանին, իսկ երբ սումգայիթյան արյունահեղության լուրն առանք, երևի ընդհանրապես մոռացանք նրան» (13):

Վեպում կան հերոսներ, ովքեր վիպական ժամանակի կրողն են: Հայկարամը երկկողմ ժամանակի կրողն է՝ անցյալի և ներկայի, և կյանքը մի դար տեսած ծերունի, ով «չուզեց դարավերջին դարասկզբի տեսածը տեսնել»:

«-Հայկարամ, դու անցյալ դարում ես ծնվել…Մի ոտքդ տասնիններում է,

1 Վահրամ Դանիելյան, Ցավի ու արհամարհանքի ժպիտը, Նորք, 2009թ.,հ.1, էջ 119-125:

մյուսը՝ մեր այս նորելուկ քսանմեկում: Դու քսաներորդ դարի վրա գցված կամուրջ ես, քեզնից շատ տեսած մարդ մեր փողոցում չկա» (13):

Գլակը, Գնելը, Գալուստը, Տարոնը, բոլորն էլ ապրում են այդ հիշողություններով, տեղեկացված են անցյալով և հիմանականում վեպի ներկա ժամանակի կրողներն են: Սակայն, ի տարբերություն այդ հերոսների, Հայկարամը անցյալի հիշողությունները կարողացել է սերունդներին ավանդել գիտակից, հասուն տարիքում. «Իհարկե, նա Մեծ եղեռնից մազապուրծ շատերին էր հանդիպել, բայց նրանք բոլորն էլ 1915-23-ին փոքր էին եղել և պատմում էին ոչ այնքան իրենց լսածը, որքան ծնողներից լսածը, իսկ Հայկարամը կենդանի տարեգիրք էր» (18):

Վեպի միջանկյալ ժամանակը ներառում է 1915-23 թվականները: Այս ժամանակահատվածում նկարագրված են եղեռնի, տեղահանության, աքսորի, կոտորածի պատկերներ: Վիպական այս ժամանակը՝ անցյալը, սկսվում է 1915 թվականի հունիսի 26-ին՝ «այն առտու, երբ եկավ Մահմուդ»:

Միջանկյալ անցյալ ժամանակն է կրում Մարիամը, նաև՝ Գլակը, ով դեռ չծնված, Մարիամի հետ ընկնում է փորձությունների հորձանուտը: Հաղթահարելով ամեն ինչ՝ նրանք կարողանում են խույս տալ թշնամուց:

Հետագա տարիների նկարագրություններից տեղեկանում են ցեղասպանության իրականացման որոշ մանրամասներին, նաև պետական որոշումներին, նամակագրային ընթացքին, հրապարակային մի շարք ելույթներին, քաղաքական հայտարարություններին:

Այս ամենով վեպական ժամանակը հավաստիություն է ձեռք բերում:

Վեպում դեպքերը նկարագրվում են մինչև մեր օրերը և ձգվում դեպի ապագա, դեպի 2153 թվականը: Գրքի վերջում Վահագն Գրիգորյանը, ինչպես Ռաֆֆին «Խենթում», տեսլային ուղևորություն է կատարում ապագա՝ 2153 թվական, և հանդիպում իր «բարեկամին» Բրյուսելյան սրճարանում:

Ռաֆֆու մոտ այդ երազը, տեսիլը ռոմանտիկական երանգավորում ունի: Լալայի հողաթմբին նիրհելով՝ Վարդանը երազ է տեսնում ու նրան պատկերանում է իր երազած ապագա Հայաստանը: Ռաֆֆու հերոսը տեսնում է վերակերտված հայրենիքը:

«Կարծես դարերը մի քանի շրջան առաջ էին գնացել, և նա տեսնում էր Հայաստանը, ավերակ և անապատ դարձած Հայաստանը, այժմ բոլորովին կերպարանափոխված, բոլորովին վերանորոգված: Այդ ի՞նչ հրաշալի փոփոխություն էր: Մի՞թե կորած դրախտը կրկին վերադարձել էր այդ երկրի վրա»:[1]

1 Ռաֆֆի, Խենթը, Շուշի, 1881թ, էջ 215:

Իսկ «Ժամանակի գետը» վեպի հեղինակի մտատեսումները մեզ տեղափոխում են հաջորդ դարի կեսերը, ուր արդեն թրքացած Եվրոպայի անտիուտոպիկ համապատկերի նկարագրությամբ է հաստատվում պատմության դառը փորձի հեղինակային ընթերցումը: Ապագան պատկերող հատվածում թուրքական դիվանագիտությունը անցյալի փորձով ու այսօրվա համառությամբ, գլխավորում է Եվրամիությունը և որպես բռնի կամ սիրով թրքացած եվրոպացիներով կազմված մեծամասնություն՝ միության մայրաքաղաքը տեղափոխում է Ստամբուլ . «Համապետական տոնի կապակցությամբ այսօր պաշտոնապես հռչակվելու է Եվրոպական միության նոր մայրաքաղաքը…Ստամբուլը, իմ բարեկամ… Տարվա ընթացքում բոլոր պետական մարմինները Ստամբուլ կտեղափոխվեն…» (497):

Իսկ «Եվրոմեջլիսն» էլ ընդունել է 301 հոդվածը, թրքացման ընթացքը դեռ շարունակվում է, թուրքերենը դարձել է պետական լեզու: Վիպական այս ժամանակում հեղինակը ներկայացնում է թրքացած ֆլամանդացի Քեմալին, ով դարձի է բերել «ազգայանամոլների մի ամբողջ գաղութ», ով «տիտանական» աշխատանք էր համարում հազարավոր ազգերի՝ լեհերի, չեխերի, իտալացիների, շվեդների կրոնափոխ անելը:

Հոռետեսական այս պատկերը հեղինակի տեսլային ուղևորություն է դեպի ապագա: Այս ամենով գրողը սակայն միտում չուներ ցույց տալու այդքան սպասված փոխհատուցումը, ավելին՝ հեղինակն այս ամենով ընդգծում է եռակողմ ժամանակի որակական հերթափոխը, այսինքն՝ այն, ինչ եղել էր անցյալում՝ կորուստեր, զրկանք ու անտարբերություն, շարունակվելու էր և դեռ շատ էր հոսելու, քանի որ «15 թվից այն կողմ ոչինչ չի փոխվել: Եվ վաղն էլ չի փոխվելու»:

Փաստերը հավաստի են, փաստարկումը՝ զորավոր, եզրահանգումը՝ տրամաբանական: Վահագն Գրիգորյանի մոտ ապագայի տեսիլը անցյալը մոռանալու կոչ է անում. «Իսկ այսպիսի գիրք այլևս մի գրեք… փոխեք, տրամագծորեն փոխեք… քանի դեռ …ողջ եք»:

Այս հրաման-կոչը, որ հնչեցնում է թրքացած Քեմալը, հեղինակի համար ճնշող ազդեցություն չի ունենում, քանի որ իրականում հեղինակի հույսը դեռ ապրում է, և այդ հույսը կապված է ապագայի հետ, «դեպի Հայրենիք տանող» ապագայի հետ: Ապագայի տեսիլը հաստատում է նպատակի կարևորությունը՝ «եթե նպատակդ լույսն է և ոչ թե խավարին հարմարվելը, ի վերջո կտեսնես լուսաբացը»:

Գր. Շահինյանը խոսելով վեպի ավարտին Վ.Գրիգորյանի տեսլային ուղևորության մասին, նշում է, որ վեպը հրապարակագրական կամ

պատմական աշխատություն չէ, այլ սոսկ վեպ, որտեղ «հեղինակը օգտագործած է պատմական դէպքերն ու դէմքերն, բայց երեւակայութեամբ յատկանշուող պատմութիւն մը հորինած է՝ իր կողմէ ստեղծուած դէպքերով ու դէմքերով, որոնք իրականանման են՝ իրական պատահարներու և անձերու պես»:[1]

Այսպիսով, խոսելով վիպական ժամանակի մասին, կարող ենք ասել, որ վեպում նկարագրված ժամանակը անվերջության մեջ է դիտվում, այսինքն, այն հանդես է գալիս որպես ամբողջական համակարգ իր երեք հիմնական կողմերով՝ անցյալ, ներկա և ապագա: Անցյալ ժամանակը ունեցել է «անղեկ, ցաքուցրիվ, անգաղափար ընթացք» և հետևաբար, «երեկվա փորձը տխուր հուշեր է բերել»: Ներկան տարիների միջով, սերունդների միջով անցնող, ժամանակի գետի նման հարահոս, «նրա գրաշահոտությունից կենսունակ նպատակ»-ներ է կրում: Բայց անկանխատեսելի է ժամանակը, անկանխատեսելի է ժամանակի գետի վարարումը. «Ինչքա՞ն կտևի մեր ուղին, ժամանակի գետի վարարումներն էլի ինչե՞ր կբերեն մեր գլխին, սոսկ իրեն՝ ժամանակին է հայտնի, մեզնից սոսկ պահանջում է գնալ մեր աստղի հետևից» (499):

Վեպում ուշադրության է արժանի ընթերցողին նվիրված հեղինակային դիմումները: Վեպի ընքացքում հեղինակը բազմաթիվ անգամներ դիմում է ընթերցողին, սկսելով, մի տեսակ, միակողմանի զրույց. «Հեռավոր անամպ ժամանակներում բուն դրած մեր բարեկամ» (44):

Այս դիմում-զրույցների միջոցով հեղինակը վերածվում է քննադատի, պատճառաբանում, վերլուծում իր գիրքը, տարակուսում ու արդարանում. «Եթե դու շատ հեռու չես մեզնից (ժամանակային առումով), ասենք, երբ որ նրանց անվանակոչում էին, չգիտեին, որ նրանք մեր պատմության հերոսներն էին դառնալու» (260):

Այսպես հեղինակը հարաբերվում է ընթերցողի հետ՝ փորձելով նրան փոխանցել, հաղորդել իր տագնապներն ու ապագայի հանդեպ մտորումները, սակայն ապագան բոլորի համար տարբեր է, քանի որ այլ անցյալ, այլ խնդիրներ և այլ երազանքներ ունեն նրանք:

Վիպական դաշտում խորհրդանշական է 5-րդ փողոցի կերպարը, խորհրդանշական մի հավաքավայր, որ հանգրվան է հայ ընտանիքի, հանգուցակետ, որտեղ սկսվում ու ավարտվում են վիպական գործողությունները՝ հերոսների կյանքի նախորդ էջերի անդրադարձներով: Խորհրդանշական է այն, որ վիպական ներկա ժամանակը սկսվում է 5-րդ փողոցում, հետագայում հերոսներն անընդհատ այդ հավաքավայր են վերադառնում, իսկ 2153թ. Բրյուսելից «ժամանակի մեքենայով»

1 Ազգ, Գր. Շահինյան, 22.11.2008թ., էջ 1-6:

Գնելը « հայտնվում է դարձյալ 5-րդ փողոցում: «Եվս մեկ քայլ և արդեն փակ աչքերով էլ կարող եմ շարունակել ճանապարհը: Ես արդեն 5-րդ փողոցում եմ: Մտնում եմ «Հինգերորդ անկյուն», թրմփում նստարանին. Մնաց, ասա գարեջուր բերեն...Ինչքան կարելի է՝ սառը... Մատուցողուհին իրար է անցնում, իսկ Մնացը խոժոռ նայում է հոնքերի տակից.

Մենք ծանո՞թ ենք ...

Ծանոթ ենք, Մնաց, վաղուց...»: (494)

Իսկ այդ «վաղուցը» 2003 թվականն էր, և այս Մնացը այն օրերի Մնացի նույնանուն շառավիղը: Նշանակում է՝ հարյուր հիսուն տարի հետո էլ կյանքը շարունակվում է 5-րդ փողոցում ու շարունակվելու է դեռ:

Վեպում տարածությունը փակ և կոնկրետ չէ, այն վիպական է: Վիպական ցանկացած գործողություն տարածական հղում ունի: «Ժամանակի գետը» վեպում տարածությունը լայն ընդգրկում ունի: Վեպի կենսական տարածքն ընդգրկում է Արևելյան և Արևմտյան Հայաստան, Դեյր-Էլ-Զոր, Սիբիր, Ֆրանսիա, Հալեպ, Միջերկրականի ափերը, Ադանա, Պոլիս և այլն:

Վիպական տարածքի ընգրկելիությունը նպաստում է կերպարների բազմազանությանը:

Խոսելով միջավայրի դերի և դրա ազդեցության մասին՝ իտալական ծագումով ամերիկացի գրականագետ Ֆրանկո Մորետտին նկատում է, որ տարածության այս իներտությունը փոփոխվում է, և յուրաքանչյուր տարածք պայմանավորում կամ առնվազն օգնում է **միայն իրեն հատուկ պատմություն (story) ստեղծել: Որոշակի պատմություններ (story) որոշակի տարածությունների արդյունք են, և որոշակի հստակ տարածությունների չլինելը անհնարին կդարձներ որոշակի կոնկրետ պատմությունների (story) ստեղծումը:**[1]

Այսինքն, հերոսների բնույթը պայմանավորում է տարածությունը, կերտում է որոշակի հոգեբանություն:

Վեպի կենսական տարածքը ընդգրկում է՝ Հալեպ, Դեյր-Էլ-Զոր. «Բայց մենք Հալեպ էինք ընկել և ճանապարհ էինք հարթում դեպի ավետյաց Դեյր-Էլ-Զոր» (101):

Տարածքային այս փռվածությունը հավաքվում-հյուսվում է ճակատագրերի շուրջ և յուրաքանչյուր լանդշաֆտ ածանցվում է ընթացքից, որը կծիկի պես գոյացնում է ազգի կենսագրությունը: Տարածական այս շղթան գծագրում է մի ազգի, մի տոհմի պատմություն՝ Գալուստյաններ-ի, ովքեր սկիզբ են առել Խարբերդից, ոտաբոբիկ կտրել անցել են անա-

1 **Franco Moretti, Atlas of the European Novel 1800-1900, pp. 70, Verso, London, 2009.:**

պատը (Մարիամ), հասել Միջերկրականի ափերը, Ֆրանսիա, Լիտվա, Սիբիր և այլուր, բայց և եկել հասել են 5-րդ փողոց:

«Ժամանակի գետը» վեպն ուսումնասիրելիս ուշադրության են արժանի նաև մետաֆորային արժեք ունեցող սիմվոլներ, որոնք կենսական նշանակություն ունեն: Ֆրանսիայում ապրող Գնել Տեր-Գալուստյանի այգում հայրենիքից բերված ծիրանենին ամեն տարի ծաղկում է, սակայն պտուղ չի տալիս: Իսկ հայրենիքից բերած ծիրանենին միայն հայրենիքում կարող է պտուղ տալ: Ծիրանենին նույնանում է ընթացքի պատճառով օտար եզերքներում հայտնված հայի հետ, ով օտար հողում նահանջ է ապրում: Գնելի այգու ծիրանենին հենց Տեր-Գալուստյանների փրկված տոհմն է: Մյուս սիմվոլ-պատկերը ծեր Թայիբ Բայքալի խլությունն է: Երբ թրքացված Հովսեփ Տեր-Գալստյանը գտնում է Թայիբին, վերջապես արտահայտում սրտի պարունակությունը, բայց վերջինս արդեն խլացած է լինում: Թայիբի խլությունը միայն իր խլությունը չէ, այլ «հայի ոսկորներու վրա շինած» ծեր Թուրքիայինը, ով այդպես էլ խուլ է ձևանում իր կատարած չարագործությունների մասին լսելիս:

Քանի որ խոսքը «Ժամանակի գետը» գրքի մասին է, «ժամանակն» ու «գետը» տոպոս լինելու նախնական հայտ կարող են ներկայացնել: Սակայն, թվացյալ բացահայտ տարածական դիրքորոշումը միայն թռուցիկ հայացքի համար է: Գրիգորյանի տեքստին հատուկ է ընդլայնված ընթացքը: Այսինքն՝ գետի մոդելը այն փոքր միավորն է, որ անվերջության ձևակերպման հնարավորությունն է պարունակում: «Անվերջություն» բառի հետ վարվեցողության երկու ձև առանձնացնենք և այս համատեքստում ընդունենք դրա երկու կոմերը՝ տարածական և ժամանակային: Վերացարկման առաջին աստիճանը հարատևության ներմուծումն է, որն իբրև տարածական-ֆիզիկական գոյաձև նաև միֆական-ժամանակային բարդացման ընթերցակարգն է մատուցում: Գետի՝ տեքստային տարածության վերածվելը տեսանելի է նախ և առաջ գրքի կառուցվածքում: Գետի սիմվոլն այստեղ ասոցացվում է հարահոսության հավերժացման հետ: Հաջորդ սիմվոլը ժամանակի սիմվոլն է՝ ժամանակային հարատևության խորհրդանիշը: Որպես ամբողջական կառուցվածքային համակարգ « ժամանակ» և «գետ» սիմվոլները ընթերցվում են փոխկապակցված լինելով:

Այսպիսով, քննելով Վահագն Գրիգորյանի «Ժամանակի գետը» վեպի կառուցվածքային որոշ յուրահատկություններ, կարող ենք ասել, որ Վահագն Գրիգորյանի վեպը շարադրված է վարպետորեն, որ նշանակում է՝ վիպական ամուր ու ինքնատիպ կառույց, մամուլից կատարված տե-

ղին մեջբերումների ներմուծումներ, գործողությունների տեղանքի, վիպական միջավայրի, պատմության ու արդի դիվանագիտության, նաև Թուրքիայի օրենքների, կենցաղի լավ իմացություն, հոգեբանական խոր դիտարկումներ, և հատկապես՝ պատումի կենսալից, ինքնատիպ լեզու՝ և՛ արևելահայերեն, և՛ արևմտահայերեն զուգահեռումներով, սիմվոլ-պատկերների ճիշտ ընտրություն, ընթերցողի հետ կապի մեջ մտնող դիմումային ոճ և այլն:

Գոհարիկ Սահակյան – բանասեր: Գիտական հետաքրքրությունները՝ նոր-ագույն գրականություն, գրականության տեսություն:

SAHAKYAN GOHARIK - THE STRUCTURE FEATURES OF THE NOVEL "RIVER OF TIME " - The structure of Vahagh Grigoryan's novel "River of Time " includes elements of biography, memoir, correspondence, chronicle. There is a problem of family continuity in the novel. There is no clear chronicle in the novel. The action is constantly evolving from the beginning of the century, 1940-50s and today.

The events described in Vahagn Grigoryan's novel "The River of Time " are told by the author and the heroes. In Armenian prose, the manifestations of this phenomenon are mainly manifested in the form of correspondence, diary entries and recollections. These are great individual novels that intertwine to become one great novel. There are characters in the novel who are the bearers of epic time. The novel describes the events from beginning of the last century to the present day and stretches to the future,to 2153, Thus speaking of epic time, we can say that the time described in the novel is viewed as infinity, that is, it acts as a complete system with its three main aspects: past, present and future. There are symbols of metaphorical value in the novel "River of Time" which are of vital importance. "Time" and "River" can be a preliminary application to be a topos. Thus, examining some structural features of Vahagn Grigoryan's novel "The River of Time" we can say that it is masterfully written, which means a strong and original novel structure.

Keywords: time structure, novel, biography, memoir, italics, story, genocide, dynasty, metaphor, symbol, topics.

СААКЯН ГОАРИК - СТРУКТУРНЫЕ ОСОБЕННОСТИ РОМАНА «РЕКА ВРЕМЕНИ» - В роман Ваагна Григоряна «Река времени» входят элементы биографии, мемуаров, переписки, летописи. В романе присутствует проблема

преемственности семьи. В нем нет четкой хронологии. Действие постоянно происходит то в начале века (1940-50-ые годы), то в наши дни.

О событиях, описанных в романе Ваагна Григоряна «Река времени», рассказывают герои автора и сам автор. В армянской прозе такое повествование выражается в основном в письмах, дневниковых записях и воспоминаниях. Это отдельные романы, которые переплетаются в один большой роман. В романе есть персонажи, являющиеся носителями эпического времени. В нем описаны события с начала прошлого века до наших дней и, простираясь в будущее, до 2153 года. Таким образом, говоря об эпическом времени, мы можем сказать, что время, описанное в романе, рассматривается в бесконечности, то есть действует как целостная система со своими тремя основными аспектами: прошлым, настоящим и будущим.

В романе «Река времени» есть символы метафорического значения, имеющие жизненно важное значение. «Время» и «река» могут быть предварительным заявлением на роль топоса. Таким образом, рассматривая некоторые структурные особенности романа Ваагна Григоряна «Река времени», можно сказать, что он написан мастерски, а значит, имеет сильную и оригинальную структуру романа.

Ключевые слова: время, структура, роман, биография, мемуары, курсив, рассказ, геноцид, династия, метафора, символ, топос.